# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29/06/2022

## ՈՐՈՇՈՒՄ N 100-Ա

## ՉԵԽԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊՐԱՀԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ «ՊԱՐԱՅԻՆ ԱՍՏՂԵՐ» ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԳՈՐԻՍԻ ԱՇՈՏ ՍԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, 90-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով <<Արտ Մյուզիք>> արվեստի միջազգային մրցույթ-փառատոնի տնօրեն Էռնեստ Պիչիկյանի 2022 թվականի հունիսի 17-ի հրավերը և Նարեկ Մկրտունցի 2022 թվականի հունիսի 23-ի դիմումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի երգեցողության բաժնի սան, <<Արտ Մյուզիք>> արվեստի միջազգային մրցույթ-փառատոնի 2-րդ կարգի դափնեկիր՝ Դավիթ Վարդանի Հարությունյանի և ուսուցիչ Նարեկ Հենրիկի Մկրտունցի մասնակցությունը 2022 թվականի օգոստոսի 7-ից 13-ը Չեխիայի մայրաքաղաք Պրահայում կայանալիք <<Պարային աստղեր>> արվեստի միջազգային մրցույթ փառատոնին ապահովելու նպատակով Նարեկ Հենրիկի Մկրտունցին Գորիս համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 1450000 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն:

2 . Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը

Կողմ -14　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2022թ. ____հունիսի____ «__30__»
ք.Գորիս